ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա79 14 05 18

0010 Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
էլ. փոստ՝ press@moj.am

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ
Բյուրեղավան համայնքի ղեկավար
պարոն Հակոբ Բալասյանին

Հարգելի պարոն Բալասյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի մարտի 19-ի թիվ Ե 204/18 գրության հայտնում ենք, որ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին» թիվ 20-Ն որոշումը /այսուհետ՝ որոշում/ չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներից, որոնց համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները **կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:**

Որոշման նախաբանում, որպես **լիազորող նորմ** հղում է կատարվում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, որի դրույթների համաձայն ուղղակիորեն համայնքի ավագանուն

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N 9-652/18
«17» 05 2018 թ.

աշխատանքային պլան որպես **նորմատիվ իրավական ակտ** հաստատելու իրավասություն վերապահված չէ:

Միաժամանակ նկատի ունենալով վերոհիշյալը հայտնում ենք, որ որոշումն իր բնույթով նորմատիվ իրավական ակտ չի հանդիսանում, ուստի այն << արդարադատության նախարարություն ներկայացնելու անհրաժեշտություն չկա՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջների:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ համաձայն 2018 թվականի ապրիլի 7-ին ուժի մեջ մտած «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի պահանջների՝ պարտադիր պետական իրավական փորձաքննության են ենթակա **ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը**: Նորմատիվ իրավական ակտի **նախագիծը** հիմնավորման հետ մեկտեղ փորձաքննության է ուղարկում համապատասխան ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը կամ Կառավարության անդամը: Փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:

Առդիր՝ 46 թերթ:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**